

բողիչներս որոնք անուշով միայն քրիստոնեայ էին, ցոյց էին տալիս իրրե թէ ս. Հոգին խօսում է իրենց մէջ, բայց իրօք արտաքին աշխարհից բերած կամ իրենց չար հոգւոյ ծընուելով մոլորութիւններ էին տարածում Ռուսի առաքեալը մի նշան է տալիս հաւատացեալներին, որով պէտք է կարողանային Աստուծոյ Հոգւով ներշնչուածներին խտրելու ներքից որոշել, այդ նշանն է Թիսուս Բրիստոսին մարմնով եկած խոստովանել, այսինքն դաւանել թէ Աստուծոյ Որդին մարմին է առել յանձին Թիսուս Բրիստոսի ով այդպիսի համոզմամբ չի հանդէս գալիս՝ չի կարող Աստուծոյ Հոգի ունենալ, որովհետեւ մարմնով յայտնուած Բրիստոսն է այդ Հոգին աշխարհ ուղարկել. իսկ ինչ որ Բրիստոսից չէ՝ Սորա հակառակորդից է (Մատթ. ԺԲ. 30), ուրեմն այդպիսիների հոգին հակառակորդիս Նեոսի բերած հոգին պէտք է լինի Նեո (յունարէն բնագրում «հակաբրիստոս») ասելով առաքելուն անշուշտ մի առանձին անձնաւորեալ էակ չի հասկանում ինչպէս պարզ երևում է Բ. 18 հ. -ից) ուր «նեոսիք բազումք» յիշուած են, այլ Նեոսի ներկայութիւնն է ահանում ամէն տեղ, ուր Բրիստոսի անուան ներքոյ Սորան հակառակ գործուում է և խօսուում Նեոսի գալտեան մասին, ասած է, արդէն առաջուց քարոզողներեղել են, և յիշաւ Սոր կտակարանի շատ տեղերից տեսնում ենք, որ առաքելական համայնքի մէջ այն համոզմունքը կենդանի էր, թէ նախ քան Բրիստոսի երկրորդ անգամ գալը և վերջին դատաստան անելը՝ պէտք է չարը իւր բոլոր զօրութեամբ յայտնուի, որպէս զի այդպէս ասած, աշխարհը հասունանայ դատաստանի համար, և որովհետեւ դորա հետ մէկ տեղ շատ վառ ցանկութիւն կար Բրիստոսի գալուստն ըստ կարելոյն շուտ ահանելու, ուստի Սորա անուան դէպ սկսուած ներքին և արտաքին հալածանքներն իրրե չարի կամ հակաբրիստոսեան ոգու յայտնութիւն նկատուեցան * և նշան Բ. գալտեան մերձ լինելուն Եովհաննու գրուածների մէջ յատկապէս արծարծուում է այդ տեսութիւնը և Բրիստոսի հակառակ ոգին

շատ տեղ անձնաւորեալ կերպով է նկարագրուում Նեոսի զաղափարի էութիւնն այս է, աւելի բաղմակողմանի բացատրութիւն տալու համար պատմական մանրամասնութեանց մէջ պէտք էր մանկել, որ մեզ շատ հեռու կտանէր:



ՄԻ ՆԵՈՆԵՍԻՍ ԵՍՏՈՒԹՅՈՒՆԻ

ՈՒՍՈՒՄԵԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՔՍԸՆԵՐԻՆԻԳՐԱԿԱՆԻՍ

Այս անգամ լույս տեսնում է մեր ուսումնականներից ոմանք առ ոչինչ են համարում՝ եւ մինչեւ անգամ՝ ծաղրում են ... Եթէ այդպէս է, ուրեմն ինչի՞ Եւրոպայի շատ համալսարաններ մեծ գումարներ են մնխում՝ եւ ինչի՞ շատ արկանաւոր անձնաւորութիւնք այդ գիտութիւնը ուսանելու համար ժամաւաճառ են լինում՝ Եւրոպի նորա Բեռլին, Եյն, Գեյ, Էլե, Լոնդոն, Էյն ... Բայց մենք փորձերով համոզուած ենք, որ եթէ մեր հոգեւորականները Աստուածաբանութեան գիտութեամբ օժտեալ լինէին, մարդորսները ազգերնուս մէջ մոտ գործել չէին համարձակուիլ:— Այսպիսի խորհրդածութեամբ է վերջացնում Հ. Գալիսմանն իւր հարցումները որոնց մի քանիսի բացատրութիւնը աշխատեցինք տալ նախորդ յօդուածով: Մենք մի քանի անգամ՝ փորձել ենք պարզել, որ այստուածաբանութիւն կոչուած գիտութիւնը ընդունի այն չէ, ինչ որ մեր ուսումնականները երեւակայում են, այլ մի ուրիշ, քաղաքակիրթ աշխարհի հետ շփումս ունեցող եկեղեցւոյ համար անհրաժեշտ քան. բայց ոչ միայն Բեռլին, Եյն, Գեյ, Էլե, Լոնդոն, Էյն շարունակում են իրենց երգը երգել, այլ դեռ վերջին օրերս մի քանիսի քահանայ, որ սովորած լինելով տեղի խրատներ տալ քան խրատ լսել մոռացել է դժբախտաբար Կրոնշտադտի մեծ անուն աւագերեցի խրատը (Ինձ մօտ մի՛ գայ սովորելու համար, թէ ինչպէս պէտք է լաւ

* Տես Օր. Բ. Թեսաղ. Բ.

քրիստոնեայ եւ լաւ քահանայ լինել. ս. Գիրք կարդա՛, ս. Բարսեղի գրութիւնները կարդա՛) — խրատ է կարդում՝ մեզ Կ. Պոլսի մի թերթի էջերից՝ համոզել ձեմարանաւարտներին, որ աստուածաբանութիւն ուսանելու չեթման, այլ եթման բժշկութիւն սովորեն, արհեստ սովորեն, երկրագործութիւն սովորեն՝ զան գիշերում՝ օգտակար գործունէութիւն ցոյց տան ... Իսկ ինչո՞ւ ո՞չ աստուածաբանութիւն, պատասխանը պատրաստ է միշտ. որովհետեւ ամէն մի պարզ քրիստոնեայ, որ աւետարանը կարդում՝ հասկանում է՝ աստուածաբան է ըստ ինքեան: Ծատ ենք հետաքրքրուել իմա՛նալու, թէ որտե՞ղ են մեր երկրում՝ այդ պարզ քրիստոնեաները, որոնք աւետարանը կարդում՝ հասկանում են. քրիստոնեաներ չասնեք — որտե՞ղ են այն քահանաները եւ աւելի բարձր կարգի հոգեւորականները, որոնք կանգ չեն առնի աւետարանից բերած (Պօղոս տաքեալ եւ մարգարէներ մի կողմ՝ մնան) ամենապարզ մի հարցի դէմ: Սակայն ի՞նչ հարկաւոր է մեր ժամանակակից սերունդին այդպիսի՝ հոգեւոր վերաբերեալ հարցերի պատասխանը. մարմին բժշկել — այդ հարկաւոր է. հաց աշխատել ու մարմին կերակրել — հարկաւոր է. իսկ հոգին — ինչ ուզում է թող լինի. հոգին ո՞վ է տեսնում, որ նորա մասին մտածէ: Եւ զարմանալի դրութեան մէջ է ներկայումս մեր ժողովրդի հոգին. ընդունակութիւններով հարուստ, քայքայ քարոյսալէս անխնամ ու անսանձ մնացած նա մի ստահակ որբի նման է: որ անխնայ վստմում է ծնօղների կարողութիւնը. այսօր նա դեռ հարուստ ժառանգութեան տէր է եւ, ազատ զգալով իրեն խաւար դարերում՝ սպորող հայրերի դրած օրէնքների ծանրութիւնից, վայելում է լիաբուռն. իսկ երբ սնանկութիւն վրայ գայ՝ ահա հոռի, քարոյսական սնանկութիւն, որի մոայլ նշաններն արդէն երեւում են: Ո՞վ պէտք է այդ վտանգի առաջն առնէ՝ մեր ժողովրդի հոգին կրկին քարոյսալէս զօրացնէ, վստմ գաղափարներով լեցնէ, մարութ ոգեւորութեան եւ բարձր թոփշների ընդունակ դարձնէ: Մի ժամանակ յիշաւ աւետարան կարդացող ու հասկացող քահանան էր անում. երանի՜ չէր որ այժմ՝ եւս շատ լինէին այդպիսի քա-

հանաներ — առանց աստուածաբանութիւն ուսանելու: Բայց մի՞թէ նորա առանց ուսանելու էին, մի՞թէ նոցա ուսուցիչները իրենց ժամանակի աստուածաբանները չէին: — Հ. Դափամաճեան կարեւոր է համարում՝ աստուածաբանութիւն ուսանելն այն տեսակէտից միայն, որ մարդորսները մուտ չգործեն մեր ազգի մէջ. սակայն հաշիւ տալիս ենք մեզ, թէ քանի տեսակ են այդ մարդորսները: Ի՞նչ է մի քանի քողոքական պատորների քարոզութիւնը այն ահագին հոսանքի մօտ, որ հազար դռներով ներս է խուժում մեր երկիրը՝ գիտութեան, լուսաւորութեան, քաղաքակրթութեան այլ եւ այլ փայլուն անուններով շլացնում թէ ուսումնականի, թէ յետին տգէտ շինականի աչքը՝ իւր «կնք» անք եւ ուրախ լեր» նշանաւոր թագաւորել տալիս ամէն տեղ: Հարկաւոր չէ՞ մի ծշմարիտ, մի հոգեւոր՝ մի աւետարանական լուսով առաջնորդուող գիտութիւն, որ մաքառէ այդ կեղծ գիտութեան քարոքանքների դէմ:

Ինչպէս վերնագիրը ցոյց է տալիս, այդ գիտութեան ներկայացուցիչներից մէկի մասին կամենում ենք խօսել այստեղ, որ կարելի է ասել ամէնից մեծ հոշակն ունի այսօր աստուածաբան անուն կրող բոլոր գիտնականների մէջ. Բերլինի համալսարանի ուսուցչապետ Ադոլֆ Հառնակն է այդ, որ առաջին անգամ՝ դատախօսութիւն է կարդացել Լայպցիգի համալսարանում՝ 1871 թ. — ի ժմբային վեցամսեակին, եւ ուրեմն ներկայ վեցամսեակին լրանում է նորա ուսուցչական գործունէութեան քսանեօննգամեակը: Ծնուել է նա 1851 թ. մայիս 7-ին (Դորպատում: ուր նորա հայրը Թէոդոսիոս Հառնակ «գործնական աստուածաբանութեան» ուսուցչապետ էր եւ ուր աւարտած լինելով նաեւ իւր ուսումը՝ գերմանացի այն շատ սակաւաթիւ գիտնականներից է նա, որոնք կանոնաւոր կերպով ուսերէն գիտեն): Կնշանակէ արիական թարմ՝ հասակի մէջ է դեռ եւ համեմատելով այն հասակին, որին հասնում են յաճախ գերմանացի գիտնականները, յատկապէս պատմիչները՝ դեռ շատ տարիներ ունի ապրելու. սակայն արդէն 48 տարիների այս կարճ

կեանքում որչափ վատասկ է ունեցել նա գիտութեան համար: Հանձարեղ ուսուցչապետը՝ որի մօտ քաղղ եմ ունեցել երկու վեցամսեակ աշակերտելու՝ յանձնարարելով ինձ մեր Եզնիկի երկասիրութեան «Եղծ աղանդոյն Մարկիոնի» մասը գերմաներէն թարգմանել, ցոյց տուաւ իւր մի ստուար աշխատութիւնը Մարկիոնի մասին: Եր գրել էր 19 տարեկան հասակում: Բայց մտադիր էր դեռ ծանօթութիւններով լրացրած հրատարակել՝ այնչափ կատարեալ գործ էր: Բայց եւ չորս տարեկան էր նա: Երբ իբրեւ դասախօս հանդէս եկաւ. երկու տարի յետոյ՝ 1876 թ.-ին, արդէն «արտաքոյ կարգի պրոֆեսորի» իսկ 1879 թ.-ին «իսկական պրոֆեսորի» ամբիոնը բարձրացաւ: Գերմանիայում ուր գիտութեան բոլոր միջոցների մէջ միջոցն այնչափ զօրեղ է, որ դասախօսները շատ անգամ ծերանում են, հատորներով գրքեր են գրում: առանց պրոֆեսորի աստիճան ստանալու՝ այսպիսի յաջողութիւն խիստ սակաւ մտահանացունների է վիճակուած: Եւ Հառնակ իւր արտաքոյ կարգի ընդունակութիւններով, ինչպէս եւ իւր արագին ու քազմակողմանի գիտութեան պաշարով սակաւ միջակիցներ ունի Եւրոպայում՝ ոչ միայն աստուածաբանների, այլ նաեւ պատմագէտների մէջ: Այդու հանդերձ նա ուրիշ ոչինչ է, բայց եթէ մշակներից մէկը այն գիտութեան, որ «մեր ուսումնականներից ոմանք առ ոչինչ են համարում եւ մինչեւ անգամ ծաղրում են», Բիւսմտութիւնից կամ խաւարամտութիւնից չէ անշուշտ, որ նա իւր հարուստ ընդունակութիւնները այս եւ ոչ մի ուրիշ — Եւ աւելի օգտակար գիտութեան է նուիրել: Հառնակ ամենաազատամիտ աստուածաբաններից մէկն է՝ այնչափ ազատամիտ, որ երբ 1888 թ.-ին Բերլինի համալսարանը հրաւիրուեցաւ իբրեւ եկեղեցական պատմութեան ուսուցչապետ՝ բողոքական Գերմանիայի ամբողջ պահպանողական քանակը այդ ընտրութեան դէմ ելաւ, եւ կայսեր անձնական միջամտութեամբ միայն կարողացաւ նա Բերլինում հաստատուել. այժմ՝ եւս նա իւր դասանակիցներից շատ շատերի՝ ուր մնաց կաթողիկոսների եւնի, աշքում՝ աղանդաւորների աղանդաւորն է:—

Սակայն լուսաւոր աշխարհում մարդու արժանիքը նորա ազատամտութեամբ ու խաւարամտութեամբ չեն չափում: այլ տուած արդիւնքով. եւ պրոֆ. Հառնակի աստուածաբանական գիտութեան մատուցած մեծ ծառայութիւնը իւր եկեղեցու եւ հայրենիքի սահմաններից դուրս եւս գնահատուել է ըստ արժանոյն: Կաթողիկ աշխարհի ժամանակակից գրեթէ ամենանշանաւոր աստուածաբան — պատմագէտը, Ֆրանսիացի Դիւշէն ամէն անգամ դասախօսութեան զալիս կուան տակին էր ունենում Հառնակի Դասանանքների Պատմութեան (Dogmengeschichte) հաստ հատորները եւ առանձին յարգանքով էր խօսում միշտ նորա մասին: Այդ եռահատոր պատմութիւնը այն իւր տեսակի մէջ եզակաւ եւ դարազուխ կազմող գործն է, որին պարտական է Հառնակ իւր հոշակը: Երբ եւ վերջին հրատեղութեամբ զնացի մեծարգոյ ուսուցչապետի մօտ, նա վերցրեց դարակից, տուաւ այդ պատմութեան առաջին, ամէնից կարեւոր (մեր եկեղեցւոյ տեսակէտից իսկապէս միակ կարեւոր) հատորը՝ աւելացնելով. Ձեռք բերէ՛ք նաեւ Ս'իյնի «հայրաբանութիւնը» (Migne, Patrologia), եւ ամէն քան ունեցած կլինիք Ձեր ապագայ գիտական գործունէութեան համար: Ս'իյնի եկեղեցական հայրերի գրուածոց ժողովածուն, որի յունարէն հայրերի մասը միայն 180 ծանր հատորներից է քաղկացած եւ շատ հազուադիւս լինելով հագիւ մօտ 2000 թուրքով ծեռք բերել կարելի է՝ ունենալ եւ օգտուել նորանից այն շրջակայում, ուր մենք սպրում ենք, շատ դժուար է դժբաղդաբար, բայց ով Հառնակի աշակերտն եղել է, ուր էլ գնայ, ստաշնող ունի յիշատի միշտ նորա Դասանանքների պատմութիւնը, եկեղեցւոյ պատմութեան վերաբերեալ որեւէ խնդիր ուսումնասիրելիս:

Christliche Welt թերթը, որին երբեմն աշխատակցում է Հառնակ եւ որի աշխատակիցներից շատերը նորա աշակերտներն են՝ այժմ՝ անուանի գիտնականներ եւ հրապարակի վերայ յայտնի մարդիկ, նորա քանակինգամայ գործունէութեան յիշատակին նուիրել է իւր մի համարը, որ կազմուած է նախկին աշակերտների յօդուածներից, Ինքը խմբա-

գիրն եւս նոցանից մէկը լինելով՝ ի՞նչ ստաշ-
նորդողի նիւթ է դարձրել այն խնդիրը,
թէ ինչ աղքատութիւն ունի աստուածաբանու-
թիւնը եկեղեցւոյ գործնական կեանքի հետ-
նա յիշում է մի խօսք Հառնակի դասախո-
սութիւնից, որի մէջ կենդանի կերպով ար-
տայայտուում է վերջինիս հայեացքը. աս-
տուածաբանութիւնը. ինչպէս ամէն գիտու-
թիւն՝ անկախօրէն պէտք է կատարէ իւր գոր-
ծը, ուշադրութեան շահնելով իւրաքանչիւր
անգամ թէ այս կամ այն հետազոտութիւնը
ինչ գործնական օգուտ պէտք է ունենայ եւ
սակայն նա ծառայում է գործնական կեան-
քին, որի հետ նորան կապողը աստուածա-
բանի ներքին ըմբռնողութիւնը պէտք է լինի
կրօնի մէջ էականը, աստուածայինը տեսնե-
լու ընդունակութիւնը: Այս տեսակէտով յի-
րաւի առաջնորդուել է Հառնակ իւր գիտնա-
կան գործունէութեան ընթացքում եւ եթէ
միշտ էականն ու աստուածայինը տեսնելու
ընդունակութիւն ցոյց չէ տուել՝ ձգտել է
զրնէ տեսնել: Իմ՝ յիշողութեան մէջ եւս մի
խօսք է մնացել նորա դասախօսութիւնից, որ
կարելի է նորա ամբողջ կեանքի նշանաբանը
համարել: Նա գիտէ առ հասարակ մեծ ճշմար-
տութիւններ այնպէս քերել, մի քանի կտորուկ
խօսքերով այնպէս արտայայտել, որ ամուր
տպաւորուում են մտքում եւ երբեք չեն կոր-
չում: Առաջին դասը, որ ես լսել եմ՝ նա
սկսեց Յովհաննու աւետարանի այն նշանաւոր
խօսքերով. «Եւ ծանիջիք զճշմարտութիւնս,
եւ ճշմարտութիւնն ազատեցէ զձեզ:» (Յովհ.
Ը. 32). եւ նա ճշմարտութիւն է որոնել ա-
մենուրեք, որով ձեռք բերած ազատութեան
շնորհի եւ ազատամիտ հոշակուել: Գշմար-
տութիւն որոնել է նա այնպիսի մի աշխար-
հում, ուր մեր ազատամիտների կարծիքով
սրբապատիկական խաւարն է իշխում՝ եւ որ-
տեղ հայեացք ձգելն անգամ ամեն ինչ բերում
մեր լուսաւոր դարի զաւակին: Նա ուսում-
նասիրել է եկեղեցւոյ դաւանանքները. հին
հին յիշատակարաններ է քրքրել եւ արդի
պատմագիտութեան ընծայած քոլոր միջոց-
ները գործ դրել, պարզելու համար, թէ
ինչպէս նոքա յոռաջ եկան, ինչպէս յունա-
կան փիլիսոփայութիւնը ըմբռնել ջանա-

լով աւետարանական ճշմարտութիւնները՝ ըստ
իւր ճաշակի դաւանական քանաձեւեր է կազ-
մել նոցա համար. ինչպէս նոքա տարրեր ըմ-
բռնում են գտել եւ տարրեր ձեւակերպու-
թիւն ստացել արեւմտաբան: Ինչո՞ւ մի դա-
ւանական կէտի համար այնչափ մեծ վէճեր
են եղել եւ ազգեր իրար գլխով անցել: Ինչ
ազդեցութիւն են ունեցել պատմական այլ
երեւոյթներ այդ դաւանանքների կազմութեան
ու տարածման վերայ, եւ փոխադարձաբար՝
ինչ ազդեցութիւն են գործել իրենք դաւա-
նանքները, ինչ հետեւանքներ, ինչ պատմա-
կան երեւոյթներ յառաջ քերել եւլն եւլն:
Եւ ամէն որ, որ լրջօրէն զբաղուել է պատ-
մական անցեալով, պէտք է խոստովանուի,
որ այդ ուսումնասիրութիւնը շատ մեծ լոյս է
սփռել՝ ինչպէս մասնաւորապէս եկեղեցւոյ
պատմութեան, այնպէս եւ ընդհանրապէս մի-
ջին ու նոր դարերի պատմութեան վերայ,
որ առանց եկեղեցւոյ պատմութեան անհաս-
կանալի է: Հարկաւ նա վերջին խօսքը չի
ասել եւ նորա եզրակացութիւնները ամէն
կէտում ուղիղ չեն եւ ընդունելի. նորա զը-
խաւոր արժանիքն այն է, որ գիտէ մի ազ-
նարկով շարել պատմական դէպքերի ահա-
գին տարածութիւն եւ սուր դիտողութեամբ
որոշել նոցա միմեանց հետ կապող եւ շար-
ժող էական տարրը: Այդպիսով նա քաց է
արել շատ երկրորդական հետազոտողների
աշքը, եւ այն գիտութիւնը, որ կարելի է աս-
նել նա է հիմնել, այս երկու տասնեակ տա-
րիների ընթացքում շատ առաջ է գնացել: Նո-
քա ամէնից տաղանդաւոր աշակերտն ու հե-
տեւողը օրինակ՝ պրոֆեսոր Լօօֆս, որի իւր
ունկնդիրների համար գրած համառօտ «Դա-
ւանանքների պատմութիւնը» շատերն իրա-
ւամբ գերադասում են Հառնակի նոյն տեսակ
գրուածքից՝ մանրամասնութեանց մէջ արել
է շատ նոր դիտողութիւններ, մի քանի կա-
րեւոր խնդիրների համար եւս տուել է Հառ-
նակի հակառակ քացատրութիւններ, որոնք
ըստ իս աւելի հիմնաւոր են եւ աւելի ուղիղ
ընթացք են տալիս նոյն իսկ ամբողջ գիտու-
թեան. քայց դորանով նորա փառքը չի խը-
նուում: Ինքը Լօօֆս Chr. Welt-ի յիշեալ հա-
մարում նորա «Դաւանանքների պատմութեան

հիմնական գաղափարը» պարզելով, ասում է վերջում: ապագան որչափ եւ նոր իմաստութիւն, նոր հայեացքներ բերէ, յամենայն դէպս «բոլոր այն անանուն մարդիկ, որոնք Հատմակի ուսումնասիրութեան եռանդ շարժելու մեծ քնդունակութեան շնորհիւ շատ քան ստացել են նորանից, որչափ եւ մանր ու մեծ տարբերութիւններ ցոյց տան գիտնական կամ գործնական ասպարհում» երախտագիտութեան զգացմունքով պէտք է միշտ կապուած մնան նորա հետ»:—Յիրաւի մեծ գործիչների գիտնական գործունէութեան զբաղւածութիւնը նենց այդ է: որ դըրդիչ են հանդիսանում, նոր գաղափարներ եւ սկզբունքներ են տալիս շատ փոքրերի, որոնցով սորա առաջնորդուիլ եւ իւրաքանչիւրն իւր փոքրիկ շրջանում արդիւնք տալ կարող են:—Առարկութիւններ ենք լսում շարունակութե ի՞նչ հարկաւոր են մեզ բարձրագոյն գիտութիւն ստացած մարդիկ, երբ միջակի համար այնչափ շատ կարօտութիւն կայ. ի՞նչ հարկաւոր է եւրոպական համալսարաններ ուղարկել աստուածաբանութիւն ուսանելու, երբ կեանքի մէջ գործնականի այնչափ պահանջ կայ. սակայն միջակ կրթութիւնը ո՞վ կտայ, եթէ բարձրագոյնն ստացած, մարդիկ չլինին. գործնական կեանքի մէջ ինչպէ՞ս պէտք է գաղափարներ իրականան: եթէ այդ գաղափարները զուտ գիտնական ծանապարհով մշակողներ չլինեն: Մեր կեանքի պահանջներն հարկաւ ուրիշ են քան եւրոպականին: մեր կրօնական համոզումներն էլ շատ տարբեր են մի քողորդական աստուածաբանի ունեցածից. քայց այն ինչ որ մենք օտար գիտնականի մօտ սովորում ենք, քայց է անում մեր աչքը մեր ունեցածը տեսնելու եւ գնահատելու. իսկ ինչ որ մենք հետազօտում եւ ուսումնական ծանապարհով մշակում ենք, մեր աշակերտները պէտք է իրագործեն կեանքի մէջ: Այդ ծանապարհը շատ երկար է թուում շատերին: քայց ուղիղ եւ ապահով ծանապարհն այդ է. ուրիշ ծանապարհով գնանք, կմոլորուինք: եւ կամ տեղ չենք հասնի, կամ շատ տեւի երկար ժամանակ ու աշխատանք գործ կդնենք, մինչեւ որ հասնինք:

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

ՕՐԹՈՂՈՔՈՒ ԵԿԵՂԵՑԻ.

Գալիցիայի աւստրիականակ ուսաց նոր մետրապոլիտ է նշանակուած Ստանիսլաւսկի եպիսկոպոս Իւլիան Կուրիլովսկի. այժմեան ակոռանիստըն է Լըվով քաղաքը: Այստեղի ուսաց եկեղեցին միացած լինելով Հռոմի հետ, երկիւղ կայ միշտ, մի գուցէ կաթոլիկական ազդեցութիւնը զօրանայ ի վնաս նորա նախնական աւանդութիւնների: Նոր մետրապոլիտը իւր եկեղեցուն հաւատարիմ մարդ է համարուում եւ տեղական լրագրիները յոյս ունին, որ նա ամուր կպահպանէ միութիւն հաստատելիս պապերի աւանդ արտօնութիւնները:

— С. Пет. Вѣдомости լրագրի թղթակիցը խօսելով ուսաց միջնակարգ դպրոցների կազմակերպութեան մասին՝ խիստ քննադատում է կրօնի դասաւանդութիւնը գիմնադիւններում: Մի աչքի ընկնող պակասութիւն նա այն է համարում, որ Հին Կտակարանի ուսումն այստեղ համեմատաբար շատ աւելի մեծ տեղ է բռնում քան նոր Կտակարանին. աշակերտները սովորում են անունների եւ գէպքերի մի մեծ կուտակութիւն, առանց պարզ գաղափար ստանալու քրիստոնէական վարդապետութեան մասին. մանաւանդ առաքելական գրութիւնները գրեթէ բոլորովին գործ չեն գրուում, եւ հետեւեալն այն է, որ կրթութեան մարդիկ հեթանոս հեղինակներից կարող են շատ քան խօսքի մէջ բերել նոցա լեզուով, իսկ Պօղոս առաքելի թղթերն իրենց կեանքում քայց էլ չեն արել. կարծես թէ սոքաւ նոյն իսկ գիտական տեսակէտով վերցրած: պակաս հետաքրքրական են: Մի ուրիշ մեծ թերութիւն է նորա կարծիքով թուանշանները, պատիժն ու պարգեատրութիւնը իւրեւ զնահատութեան միջոց գործադրելը: Հատ կրօնուսոյցներ, բարի, անունն են վաստակում եւ սիրելի դառնում նորանով, որ արժանիքի բարձր թուանշաններ են դնում կամ երբ աշակերտը լայիս է, իսկոյն 1-ը կամ 2-ը 4-ի, 5-ի են փոխում: եւ այդպէս աշակերտները սովորում են կրօնին իրեւ մի երկրորդական առաքելայի վերայ նայել, որ առանց սովորելու էլ կարելի է առաջ գնալ, Որչափ եւ անհրաժեշտ պահանջ է, որ աշակերտները կիւրակէ ու տօն օրերը եկեղեցի գնան, պատիժներով ու սպառնալիքներով չպէտք է ստիպել նոցա, այլ համոզել ու սիրելի դարձնել եկեղեցւոյ կարգերը: Այլապէս այն ընտանիքներից, որոնք աչքի չեն ընկնում իրենց բարեպաշտութեամբ, ելնում են միշտ գէպի եկեղեցին անտարբեր երբեմն նոյն իսկ թշնամական տրամագրութիւն ունեցող պատանիներ. այդ տրամագրութիւնն աւելի եւս զօրանում է ուսանողական շրջանում, ե